

Շինարարական արտադրանք

(թեսավորման հարցաշար)

	հարց	պատասխաններ
1.	Ե/բ կոնստրուկցիաներում ամրանի վրա բետոնի պաշտպանիչ շերտի նվազագույն հաստությունը	1. չի նորմավորվում 2. ոչ պակաս ամրանի տրամագծից, min 10մմ 3. ամրանի տրամագծի կրկնապատիկը
2.	Ե/բ կոնստրուկցիաների գծային չափսերի թույլատրելի շեղումները	1. չի թույլատրվում 2. 5 ÷ 8մմ 3. 2 ÷ 5մմ
3.	Ե/բ կոնստրուկցիաների փորձարկումները բեռնավորմամբ իրականացվում են	1. յուրաքանչյուր խմբաքանակի համար 2. տարին մեկ անգամ 3. պատրաստման տեխնոլոգիայի փոփոխման դեպքում
4.	Ե/բ կոնստրուկցիաների մատակարարվող յուրաքանչյուր խմբաքանակը պետք է ուղեկցվի	1. փորձարկման արձանագրությունով 2. որակի փաստաթղթով 3. համապատասխանության սերտիֆիկատով
5.	Ե/բ կոնստրուկցիաների մակնշման մեջ տարեթիվը պետք է գրվի հետևյալ հերթականությամբ	1. ամիս, տարի 2. տարի, ամիս, օր 3. օր, ամիս, տարի
6.	Ե/բ կոնստրուկցիաների մակնշման մեջ արտադրանքի կշիռը նշվում է եթե	1. բոլոր դեպքերում 2. այն $\geq 0,5$ տն. 3. այն $\geq 1,0$ տն
7.	Ե/բ կոնստրուկցիաների վրա կատարվող մակնշման գույնն է	1. կարմիր 2. սև, մուգ շականակագույն 3. դեղին
8.	Ծանր բետոնի արտադրման համար օգտագործվող խճի և կոպիճի խտությունը պետք է լինի	1. 1,5 ÷ 2,5 գ/սմ ³ 2. 2 ÷ 3 գ/սմ ³ 3. ցանկացած խտության
9.	Շինարարության կարիքների համար օգտագործվող խիճը և կոպիճը արտադրվում է հետևյալ ֆրակցիաներով	1. 0 ÷ 5, 10 ÷ 20, 20 ÷ 40 2. 5 ÷ 10, 10 ÷ 20, 20 ÷ 40, 40 ÷ 80 3. 20 ÷ 40, 40 ÷ 80
10.	Շինարարության կարիքների համար օգտագործվող խիճի և կոպիճի մեջ ջարդված հատիկների քանակությունը չպետք է պակաս լինի	1. 50% 2. 80% 3. 90%
11.	Շինարարության կարիքների համար օգտագործվող կոպիճի մեջ հարթ և ասեղնային հատիկների քանակությունը չպետք է գերազանցի	1. 35% 2. 15% 3. 50%
12.	Շինարարության կարիքների համար օգտագործվող խիճի և կոպիճի մեջ կավի կոշտուկները պետք է լինեն	1. 0,5 ÷ 1,0% 2. 1 ÷ 1,5% 3. 0,25 ÷ 0,5%
13.	Ծանր բետոնի պատրաստման ժամանակ հավելանյութը ավելացվում է բետոնախառնուրդին	1. ջրի հետ միասին 2. ցեմենտի հետ միասին 3. ջրով շաղախելուց հետո
14.	բետոնախառնուրդի պատրաստման ընթացքում օգտագործվող տաք ջրի ջերմաստիճանը չպետք է գերազանցի	1. 50 C° 2. 70 C° 3. 85C°

15.	բետոնախառնուրդի պատրաստման ժամանակ նյութերի բեռնավորման հերթականությունն է	1.լցանյութեր, ցեմենտ, ջուր 2.չի նորմավորվում 3.լցանյութեր, ջուր, ցեմենտ
16.	բետոնախառնուրդի դյուրադրելիությունը որոշվում է բեռնախառնիչից դատարկելուց հետո	1.15 րոպեների ընթացքում 2.30 րոպեների ընթացքում 3.ցանկացած պահին
17.	բետոնախառնուրդի դյուրադրելիությունը որոշվում է, յուրաքանչյուր խմբաքանակի համար, ոչ պակաս մեկ անգամ	1.յուրաքանչյուր մեքենայի համար 2.հերթափոխի ընթացքում 3.մեկ օրվա ընթացքում
18.	բետոնախառնուրդի ամրությունը և խտությունը որոշվում է ոչ պակաս մեկ անգամ	1.յուրաքանչյուր խմբաքանակի համար 2.հերթափոխի ընթացքում 3.մեկ օրվա ընթացքում
19.	շինարարությունում օգտագործվող բնական ծակոտկեն լցիչների լցովի խտությունը պետք է լինի	1.խիճ $\leq 1400 \text{ կգ/մ}^3$, ավազ $\leq 1500 \text{ կգ/մ}^3$ 2.խիճ $\geq 1400 \text{ կգ/մ}^3$, ավազ $\geq 1500 \text{ կգ/մ}^3$ 3.խիճ, ավազ $\geq 1400 \text{ կգ/մ}^3$
20.	օտարածին լեռնային ապարների պարունակությունը ծակոտկեն խճերում ճպետք է գերազանցի	1.5% 2.10% 3.20%
21.	բնական ծակոտկեն լցիչների փորձարկման համար խմբաքանակից վերցվում է ոչ պակաս	1.1 մմուշ 2.5 մմուշ 3.3 մմուշ
22.	բնական քարերից շին. արտադրանքի ստուգման համար խմբաքանակից ընտրում են	1.1% կամ min 5 հատ 2.2% կամ min 10 հատ 3.ցանկացած քանակի
23.	բնական տուֆաքարերի միջին խտությունը պետք է լինի	1.մինչև 2000 կգ/սմ^3 2. $2200 \pm 2500 \text{ կգ/սմ}^3$ 3.ոչ ավել 2200 կգ/սմ^3
24.	բնական տուֆաքարերի ջրահագեցման գործակիցը պետք է լինի	1.ոչ պակաս 0,85 2.ոչ ավել 0,85 3. $0,65 \pm 0,95$
25.	բնական քարերից ստացված երեսպատման սալերի ընդունման փորձարկումների ժամանակ ստուգվում են	1.արտաքին մակերեսի որակը և ֆակտուրան, երկրաչափական չափսերը, ձևը 2.երկրաչափական չափսերը, ամրությունը 3.արտաքին մակերեսի որակը, ջրակլանումը, ամրությունը
26.	բետոնե սնամեջ պատաքարերի արտաքին պատի նվազագույն հաստատությունը պետք է լինի	1.15մմ 2.20մմ 3.30մմ
27.	բետոնե պատաքարերի երկարության և լայնության շեղումները պետք է լինեն	1. ± 3 մմ 2.+ 3մմ 3.- 3մմ
28.	ցեմենտներում բնական ռադիոնուկլիդների տեսակարար էֆեկտիվ ակտիվությունը չպետք է գերազանցի	1.370 բկ/կգ 2.500 բկ/կգ 3.1000 բկ/կգ
29.	ցեմենտի արտադրողը պետք է որոշի ռադիոնուկլիդների ակտիվության ցուցանիշը նվազագույնը	1.տարին 1 անգամ 2.երբ ցանկանում է 3.ոչ մի անգամ
30.	Ինչպե՞ս են փոխվում մանգանով լիգիրացված պողպատի հատկությունները.	1.Մեծանում է ամրությունը, 2.Մեծանում է պլաստիկությունը, 3.Նվազում է փխրունությունը
31.	Ստորև բերված պողպատներից որն ունի առավել միատարր կառուցվածք.	1.Կիսահանդարտած 2.Հանդարտած 3.Շռացող

32.	Որքա՞ն է ածխածնի առավելագույն պարունակությունը պողպատում, %ով.	1. մինչև 2 % 2. 2. 3% 3. 4%
33.	Ինչպե՞ս է նշվում սառը վիճակում դեֆորմացված պողպատի դասը.	1.A ինդեքսով 2.B ինդեքսով 3.AT ինդեքսով
34.	Ինչպե՞ս է նշվում շիկազուցված ձողային ամրանի պողպատի դասը.	1.A ինդեքսով 2.B 3.AT ինդեքսով
35.	Ինչպե՞ս է նշվում ջերմամշակված ձողային ամրանի պողպատի դասը.	1.A ինդեքսով 2.B 3.AT ինդեքսով
36.	Նշեք D> 10մմ տրամագծով ամրանների փորձանմուշի աշխատանքային երկարության պահանջվող չափը.	1.Ոչ պակաս 10d 2.Ոչ պակաս 15d 3.Ոչ պակաս 20d
37.	Նախալարված երկաթբետոնե կոնստրուկցիաների պատրաստման քանի եղանակ գոյություն ունի.	1.1 2.2 3.3
38.	Նշեք ավազահատիկների առավելագույն թույլատրելի չափը մմ-ով.	1.2.5 2.3 3.5
39.	Ինչպե՞ս են անվանում ցեմենտի իրական ամրությունը.	1.Տեսականիշ (ՎՈՐՍՈ) 2.Ակտիվություն 3.Դաս
40.	Ցեմենտը որքա՞ն ժամանակ կարելի է պահել անբարձրում.	1.Մինչև 30օր 2.Մինչև 60 օր 3.Մինչև 90օր
41.	Նշեք բազային խորանարդ-նմուշների չափերը, որոնց սեղմման ամրության սահմանով որոշվում է բետոնի դասը, մմ- ով.	1.200x 200 x 200 2.150x150x150 3.70.7x 70.7x70.7
42.	Ինչպիսի՞ միավորներով են չափվում բետոնախառնուրդի դյուրադրելիությունը	1.վրկ 2.սմ 3.տոկոս
43.	Բետոնի սառնակայունության որոշման դեպքում որքա՞ն է ամրության նվազեցման թույլատրելի սահմանը.	1.Մինչև 5% 2.Մինչև 10% 3.Մինչև 15%
44.	Երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի լցանյութի ամենամեծ խոշորությունը թույլատրվում է ամրանի ձողերի միջև եղած չափի	1.0/2/3 ոչ ավել 2.1/2 ոչ ավել 3.3/4 ոչ ավել
45.	Երկաթբետոնե սալերի բետոնի լցանյութի ամենամեծ խոշորությունը թույլատրվում է ամրանի ձողերի միջև եղած չափի.	1.2/3 ոչ ավել 2.1/2 ոչ ավել 3.3/4 ոչ ավել
46.	Բետոնամղիչով մղման դեպքում բետոնի լցանյութի ամենամեծ խոշորությունը թույլատրվում է մղիչի խողովակաշարի ներքին տրամագծի.	1.0.5 ոչ ավել 2.0.33 ոչ ավել 3.0.66
47.	Բետոնի փաստացի ամրությունը նախագծային ամրության համապատասխանությունը որոշելու համար փորձանմուշները փորձարկում են.	1.18 օրական հասակում 2.28 օրական հասակում 3.38 օրական հասակում
48.	Բետոնի ամրությունը ապակաղապարման ժամանակ պետք է լինի ` ոչ պակաս նախագծային ամրության.	1.40% 2.50% 3.60%
49.	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների B12,5- B25 դասի առանց հակասառեցման հավելանյութերի բետոնի ամրությունը սառեցման պահին պետք է կազմի ` նախագծային ամրության ոչ պակաս.	1.30% 2.40% 3.50%
50.	Ե/բ կոնստրուկցիաների բեռնավորումը հաշվարկային բեռով թույլատրվում է միայն բետոնի n`ր ամրության հասնելուց հետո.	1.70% նախագծայինի 2.80% նախագծայինի 3.100% նախագծայինի